ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 86

ք. Արտաշատ

«09» 11 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «ՀՀ Արարատի մարզի Դալարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 68 որոշման հավելվածի 19-րդ տողում «Հունանյան Գեղամ» բառերը փոխարինել «Ամիրխանյան Մարուս» բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 85

«09» «11» 2012թ.

ք. Արտաշատ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1913-ն որոշման Հավելված 2-ով հաստատված «Ռազմավարական ծրագրի 2012-2016 թվականների միջոցառումների ցանկի» «Ռազմավարական ուղղություն 1-ին բաժնի» 2-րդ ռազմավարության 2-րդ կետի պահանջները.

1. Ստեղծել Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով մարզային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով մարզային հանձնաժողովի գործունեության աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզպետի
2012 թվականի նոյեմբերի 09 -ի
N 85 որոշման

ԿԱԶՄ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Սամվել Մինասյան	ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ

Անդամներ

Ստեփան Խաչատրյան	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Հայկազ Տերտերյան	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ
Ալբերտ Մկրտչյան	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Արայիկ Պողոսյան	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Վարդան Հովսեփյան	ՀՀ Արարատի մարզային փրկարարական վարչության պետ, Փ/Ծ փոխգնդապետ
Արտակ Մանուկյան	ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ
Աշոտ Վարդանյան	ՀՀ Արարատի մարզի Արտաշատի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ, փոխգնդապետ

Հրայր Մկրտչյան	<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ <<Կենտրոն-Արևմտյան>> տարածքային մասնաճյուղի ջրի արտադրության միավորի պետ
Արմեն Համբարձումյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Արարատի մարզային կենտրոնի պետ
Շամո Բաքոյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի Արարատի մարզային կենտրոնի տնօրեն

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արարատի մարզպետի
2012 թվականի նոյեմբերի 09 -ի
N 85 որոշման

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները, այսինքն՝ աշխատակարգը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Հանձնաժողովի նպատակը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գործընթացի ապահովման համար բնագավառին վերաբերող հարցերի քննարկումն է, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գործընթացում բոլոր շահագրգիռ ոլորտների համագործակցության, ներգրավվածության և արձագանքի համակարգումը, գերակա խնդիրների վեր հանումը, գործընթացի հսկողությունը և համակարգումը:

3. Հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) առանձին վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակի լարվածության, բռնկումների ժամանակ համակարգում է արձագանքման միջոցառումները՝ շահագրգիռ կողմերի գործողությունների համակարգման միջոցով:

2) օժանդակում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գործող պետական կառավարման մարմինների կողմից վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման աշխատանքներին,

3) անհրաժեշտության դեպքում, հիմք ընդունելով Առողջապահության նախարարության համապատասխան կառույցների առաջարկությունը, հաստատում է կարանտին սահմանելու պահանջը:

4) կազմակերպում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գերակա հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ.

5) կազմակերպում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների վերանայման և լրամշակման աշխատանքները.

6) անհրաժեշտության դեպքում քննարկում է վարակիչ հիվանդություններին առնչվող կառույցների կողմից, իրենց ոլորտներին վերաբերող հարցերի շուրջ առաջարկությունները՝ Ազգային համակարգող մարմնի քննարկմանը համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են եռամսյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը կարող է լինել 5, առավելագույնը՝ 15:

6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է: Հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

7. Հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներով:

10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

11. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) իրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը:

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

5) հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

13. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և, անհրաժեշտության դեպքում, կատարելու դիտողություններ և առաջարկություններ:

2) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին.

3) իրենց իրավասության շրջանակներում կատարում են հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները՝ ճառագայթային, քիմիական և կենսաբանական վտանգների և դրանց դիմակայման հարցերի վերաբերյալ:

4) Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում վերջինս ծանոթանում է նիստի արձանագրությանը:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը

2) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը, շրջանառում է այն և համակարգում է հանձնաժողովի անդամների դիտողությունների և առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.

4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

5) հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

15. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի որոշմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 84

<06> 11 2012թ.

ք. Արտաշատ

ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Մարզպետի 2012 թվականի հուլիսի 13-ի "Էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին" թիվ 41 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
«Արարատի մարզպետի
06.11.2012թ. թիվ 84 որոշման

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

հանձնաժողովի նախագահ

Ա. Վարդանյան - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի քարտուղար

Ս. Խուդավերդյան - մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ

հանձնաժողովի անդամներ

Գ. Մուրադյան - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Գ. Պողոսյան - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

ս. Բաբայան - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Ա. Սարգսյան - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 83

<06> 11 2012թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ի N 05 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Տափերականի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունը

ՀՀ Արարատի մարզպետի 2011 թվականի հունվարի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 05 որոշման հավելվածի 32 տողում <<Հակոբյան Մինաս>> բառերը փոխարինել <<Պողոսյան Հասմիկ>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ